Կարգապահական գործ թիվ ԿԳ-26154

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 944) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Լուսինե Միքայելյանը **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ),** հայտնել է, որ 2024 թվականի սեպտեմբերի 19-ին ժառանգության հետ կապված հարցով փաստաբան Կարինե Սիմիդյանի հետ կնքվել է պայմանագիր և վերջինիս առձեռն վճարվել է 250 000 ՀՀ դրամ: Դրանից հետո Փաստաբանն ասել է, որ լրացուցիչ գումար պետք է վճարի փորձագետի և այլ ծառայությունների դիմաց, որից հետո նշել է, որ փորձագետ պետք չէ, ինքը կկատարի այդ աշխատանքը: Մինչ օրս աշխատանքներ չեն կատարվել: Փաստաբանը մեկ տարի է՝ չի պատասխանում իր զանգերին և նամակներին, այնինչ ըստ պայմանավորվածության՝ հայցը դատարան պետք է մուտքագրվեր մեկ տարի առաջ:

Դիմողը հայտնել է նաև, որ Փաստաբանը տարբեր պատճառաբանություններով չի տրամադրել պայմանագրի օրինակը:

Խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Դիմողին 2026 թվականի մարտի 26-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, որպիսիք Դիմողի կողմից չեն ներկայացվել:

թիվ ԿԳ-26154-2-Ա
08.07.2026թ.

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Դիմողի դիմումի վերաբերյալ, մինչդեռ Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին 2026 թվականի մարտի 26-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, ինչին Փաստաբանը չի արձագանքել, դիրքորոշում և/կամ նյութեր չի ներկայացրել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 2026 թվականի մարտի 16-ի թիվ 262-Ա/ԿԳ-26154 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 6-րդ հոդվածի 6-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը 2026 թվականի մարտի 18-ին հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Շուշան Հարությունյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 2026 թվականի մայիսի 18-ին կազմել է եզրակացություն, որում շարադրվել են կարգապահական գործի կողմերի դիրքորոշումները, գործում առկա նյութերի ցանկը և էական այլ տվյալներ:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 2026 թվականի մայիսի 18-ին և Հանձնաժողովի նախագահի 2026 թվականի մայիսի 19-ի թիվ ԿԳ-26154-1-Ա որոշմամբ ընդունվել է Հանձնաժողովի վարույթ:

Հանձնաժողովի նիստ(եր)ը տեղի է(են) ունեցել 2026 թվականի հուլիսի 08-ի ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ժառանգության իրավահարաբերությունների շրջանակներում ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը: ***Տվյալ փաստը հաստատվում է կողմերի նամակագրությունների կադրահանումներով (սքրինշոթ) և Դիմողի բացատրություններով, որոնց իսկության ու արժանահավատության դեմ Փաստաբանը***

չի առարկել:

2. Դիմողը Փաստաբանի ծառայությունների դիմաց վճարել է կանխիկ եղանակով՝ 2024 թվականի սեպտեմբեր ամսվա ժամանակահատվածում: ***Տվյալ փաստը հաստատվում է կողմերի նամակագրությունների կադրահանումներով (սքրինշոթ) և Դիմողի բացատրություններով, որոնց իսկության ու արժանահավատության դեմ Փաստաբանը չի առարկել:***

3. Փաստաբանը Դիմողին փաստացի չի մատուցել իրավական օգնության ծառայություններ և բարեխղճորեն չի իրականացրել Դիմողի առջև ստանձնած իր մասնագիտական պարտականությունները: ***Տվյալ փաստը հաստատվում է Դիմողի բացատրություններով, որոնց իսկության ու արժանահավատության դեմ Փաստաբանը չի առարկել, ինչպես նաև հաստատվում է Փաստաբանի կողմից հակառակը հաստատող ապացույցների չներկայացմամբ՝ հաշվի առնելով, որ չտեղեկացնելու փաստը հանդիսանում է բացասական փաստ, որի առկայությունը Դիմողն ապացուցել չի կարող, փոխարենը Փաստաբանն է պարտավոր ապացուցել տեղեկացնելու փաստը:***

4. Փաստաբանը Դիմողին կանոնավորապես չի տեղեկացրել վերջինիս գործի (հանձնարարության կատարման ընթացքի) մասին: ***Տվյալ փաստը հաստատվում է Դիմողի բացատրություններով, որոնց իսկության ու արժանահավատության դեմ Փաստաբանը չի առարկել, ինչպես նաև հաստատվում է Փաստաբանի կողմից հակառակը հաստատող ապացույցների չներկայացմամբ՝ հաշվի առնելով, որ չտեղեկացնելու փաստը հանդիսանում է բացասական փաստ, որի առկայությունը Դիմողն ապացուցել չի կարող, փոխարենը Փաստաբանն է պարտավոր ապացուցել տեղեկացնելու փաստը:***

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանողը փաստաբան է հանդիսանում 2009 թվականի հոկտեմբերի 24-ից և 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում ունի 3 կարգապահական տույժ (խախտումների բնույթը, տույժերի բնույթը, մարվածությունն ու այլ ամենը տեղեկանքում նշված են):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի մասով Փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտումներ և ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանություններով և հիմնավորումներով:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի*

պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանական գործունեության համար կատարվող վճարումները իրականացվում են «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:*

«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանական ծառայությունների, ինչպես նաև բոլոր խորհրդատվական (հաշվապահական, աուդիտորական, իրավաբանական, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլ խորհրդատվական) ծառայությունների մատուցման վճարների ընդունումն իրականացվում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է՝*

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ ա. նյութերի ուսումնասիրությունը, բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:*

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի համադրված վերլուծության ու մեկնաբանության շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը յուրաքանչյուր գործ ստանձնելիս պետք է իր ծառայության վճարումներն ընդունի միայն «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքով սահմանված կարգով, այն է՝ բացառությունների բացակայության դեպքում՝ անկանխիկ եղանակով, ինչպես նաև, որպես առանձին կանոն, պետք է օժտված լինի տվյալ գործը պատշաճ վարելու համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների բավարար իմացությամբ ու բավարար գործնական փորձով, ինչը ոչ միայն մասնագիտական, այլև վարքագծային-էթիկական նշանակության կանոն է, առանց որի կատարման հնարավոր չէ կամ առնվազն վտանգված է տվյալ գործով բարեխիղճ իրավական օգնության տրամադրումը, ներառյալ նաև՝ հնարավոր իրավական հետևանքների գիտակցումն ու դրանց առաջացման մասին իրազեկումը վստահորդին, ինչպես նաև գործը պատշաճ վարելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումը և հակառակի արդյունքում վստահորդին սպասվող անբարենպաստ, սակայն կանխելի հետևանքների կանխարգելումը:

Ավելին, գործը պատշաճ վարելուց զատ, փաստաբանը պարտավոր է վստահորդի հետ ապահովել նաև կայուն և հասանելի կապ, ինչը մի կողմից ենթադրում է փաստաբանի ակտիվ ու նախաձեռնողական վարքագիծ՝ վստահորդին նրա գործի (հանձնարարության կատարման ընթացքի) մասին կանոնավորապես տեղեկացնելու եղանակով՝ անկախ նույնիսկ վստահորդի հարցումների առկայությունից, իսկ մյուս կողմից ենթադրում է արձագանքող վարքագիծ՝ վստահորդի կողմից առաջադրվող հարցերին պատշաճ պատասխանելու եղանակով:

Նշվածի շրջանակներում անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, այդպիսով նաև՝ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտման առկայությանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ըստ Դիմողի պնդումների՝ Փաստաբանն իր կողմից Դիմողին մատուցվելիք փաստաբանական ծառայությունների դիմաց վճարումներն ընդունել է կանխիկ եղանակով, որպիսի փաստի դեմ Փաստաբանը չի առարկել, այդ փաստը չի վիճարկել ու չի հերքել, առավել ևս՝ հակառակը չի պնդել և չի ապացուցել, որպիսի պայմաններում Հանձնաժողովը, գործի փաստերի ու նյութերի վրա հիմնված ու օբյեկտիվորեն ձևավորված ներքին համոզմամբ հաստատված է համարում Փաստաբանի կողմից փաստաբանական ծառայությունների դիմաց վճարումը Դիմողից կանխիկ եղանակով ընդունելու փաստը՝ այդպիսով հաստատելով Փաստաբանի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, այդպիսով նաև՝ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտումը՝ նկատի ունենալով, որ «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքով սահմանված կարգը սույն դեպքի համար տվյալ ժամանակահատվածում և առ այսօր եղել ու մնում է բացառապես անկանխիկ եղանակը, որը Փաստաբանը խախտել է:

Այսպիսով, Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Փաստաբանը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, այդպիսով նաև՝ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում, որի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ նկատի ունենալով նաև, որ Փաստաբանի մեղքի բացակայության մասին տվյալներ ու դրանք հաստատող ապացույցներ վարույթի նյութերում առկա չեն::

Հաջորդիվ անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 3.5.5 ենթակետի, այդպիսով նաև՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի խախտման առկայությանը՝ Հանձնաժողովը փաստում է, որ Փաստաբանը որևէ ապացույց չի ներկայացրել իր կողմից Դիմողին փաստացի իրավաբանական օգնություն ցուցաբերվելու և Դիմողի հանձնարարության կատարման ուղղությամբ գործուն, որակավորված և այլ առումներով պատշաճ միջոցներ ձեռնարկելու փաստի հաստատման նպատակով, ինչն ինքնին արդեն վկայում է Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.5.5 ենթակետի, այդպիսով նաև՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի խախտման մասին՝ նկատի ունենալով, որ Փաստաբանը Դիմողին փաստացի չի մատուցել փաստաբանական ծառայություններ, թեև ստանձնել է այդպիսի պարտականություն ու պարտավոր է եղել դրանք մատուցել բարեխղճորեն:

Փաստաբանը սույն վարույթի շրջանակներում չի ներկայացրել վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցություն առ այն, որ բարեխղճորեն, որակավորված և ժամանակին կատարել է Դիմողից ընդունած հանձնարարության պատշաճ ընթացքն ապահովելուն ուղղված գործողություններ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողից ընդունած հանձնարարության պատշաճ ընթացքն ապահովելուն ուղղված գործողություններ կատարելու մասին ապացույցների առկայության դեպքում դրանք ողջամտորեն պետք է լինեին Փաստաբանի տիրապետման ներքո և ներկայացվեին Հանձնաժողովին, ինչը, սակայն, տեղի չի ունեցել, իսկ Փաստաբանը նաև չի նշել այդպիսի ապացույցները հավաքագրելու և/կամ Հանձնաժողովին ներկայացնելու անհնարինության մասին և չի կատարել դրանից բխող որևէ գործողություն՝ ուղղված այնպիսի ապացույցների ձեռք բերմանը, որոնցով հնարավոր կլիներ փաստել Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջների խախտման բացակայությունը:

Ընդ որում, քննարկվող հարցի մասով ապացույցներ ներկայացնելու պարտականությունը հենց Փաստաբանին պատկանելու հանգամանքը բխում է նաև այն իրողությունից, որ իր կողմից որևէ գործողության կատարման վերաբերյալ ապացույցներն առկայության դեպքում տրամաբանորեն գտնվում են հենց Փաստաբանի տիրապետման ներքո, իսկ նույն գործողության չկատարումը, սույն դեպքում՝ բարեխիղճ կամ այլ առումով պատշաճ իրավաբանական օգնության չտրամադրումն ինքնին հանդիսանում է բացասական (ժխտողական) փաստ, որի ապացուցման պարտականությունը չի կարող դրվել բացասական փաստ վկայակոչող կամ դրական փաստը ժխտող անձի՝ սույն դեպքում Դիմողի վրա:

Այսպիսով, Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Փաստաբանը թույլ է տվել Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտում, որի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ նկատի ունենալով նաև, որ Փաստաբանի մեղքի բացակայության մասին տվյալներ ու դրանք հաստատող ապացույցներ վարույթի նյութերում առկա չեն:

Հաջորդիվ անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 3.6.1 ենթակետի ու նաև այդ շրջանակներում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտման առկայությանը՝ Հանձնաժողովը փաստում է, որ Փաստաբանը որևէ ապացույց չի ներկայացրել՝ ի հավաստումն իր կողմից տվյալ վարքագծային-էթիկական կանոնի ակտիվ ու նախաձեռնողական հատվածի կատարման՝ Դիմողին իր գործի (հանձնարարության կատարման ընթացքի) մասին կանոնավորապես տեղեկացման, ընդ որում՝ այս մասով ապացույցներ պետք է ներկայացներ հենց Փաստաբանը՝ նկատի ունենալով, որ իր կողմից որևէ գործողության կատարման վերաբերյալ ապացույցներն առկայության դեպքում տրամաբանորեն գտնվում են հենց Փաստաբանի տիրապետման ներքո, իսկ նույն գործողության չկատարումն ինքնին հանդիսանում է բացասական (ժխտողական) փաստ, որի ապացուցման պարտականությունը չի կարող դրվել բացասական փաստ վկայակոչող կամ դրական փաստը ժխտող անձի՝ սույն դեպքում Դիմողի վրա:

Ինչ վերաբերում է Դիմողի ներկայացրած նամակագրությունների կադրահանումներին, ապա դրանցի ևս հստակ է, որ Փաստաբանը Դիմողին բուն գործի (հանձնարարության կատարման ընթացքի) մասին որևէ տվյալ չի հաղորդել, գործի (հանձնարարության կատարման ընթացքի) շարժընթացի մասին Դիմողին չի իրազեկել, իսկ Փաստաբանի հատուկենտ արձագանքները վերաբերում են իր անձնական կամ գործնական զբաղվածությանը, Դիմողի հետ կապ հաստատելու անհնարինությանը կամ լրացուցիչ կապ հաստատելու խոստմանը և նմանատիպ այլ հարցերի, որոնք չեն կարող համարվել Դիմողին

նրա գործի (հանձնարարության կատարման ընթացքի) մասին կանոնավոր տեղեկացում Փաստաբանի կողմից:

Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ նախորդիվ նկարագրվածն իր հերթին պարունակում է Կանոնագրքի 3.6.1 ենթակետի ու նաև այդ շրջանակներում Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում՝ Փաստաբանի կողմից, ընդ որում՝ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ առկա չեն, որպիսի պարագայում Փաստաբանն այս մասով ևս ենթակա է կարգապահական պատասխանատվության:

8. Կարգապահական տույժի ընտրությունը.

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա է «Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» տույժի տեսակը ընտրելու առանձին երկու հիմք, իսկ տույժի որևէ այլ տեսակ, Հանձնաժողովի գնահատմամբ, չի կարող լինել արդյունավետ ու ծառայել օրենքով կանխորոշված իրավաչափ նպատակի իրագործմանը:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝*

1) սույն օրենքով նախատեսված պարտականությունների (ներառյալ՝ սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարքագծի կանոնների) դիտավորությամբ կատարված խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ.

2) մեկ տարվա ընթացքում երկու անգամ կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանի կողմից կրկին կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքում, բացառությամբ անդամավճար չվճարելու հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքերի.

Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի հիմնական խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանական էթիկայի նորմերին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Պալատի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելով: Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Պալատն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ, ինչպես նաև որպես փաստաբանի ազատության և անկախության երաշխիք Պալատին իրավունք է տրվում փաստաբանի նկատմամբ կիրառել արտոնագրի դադարեցման կարգապահական տույժը, օրինակ, նրա կողմից դիտավորությամբ կատարված այնպիսի խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ: Օրենքով Պալատին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Պալատը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Այսպես, Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով Պալատը պարտավորվում է փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելիս ղեկավարվել համաչափության սկզբունքով, ինչպես նաև հաշվի առնել կարգապահական խախտման հետևանքները, իրավախախտի անձը, մեղքի աստիճանը և վերաբերելի այլ կարևոր հանգամանքներ:

Միաժամանակ, պետք է արձանագրել, Օրենքը նաև սահմանում է փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակի կիրառման համար անհրաժեշտ նախապայմանները:

Դրանց շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում դեպքերն առ այն, երբ

- փաստաբանը դիտավորությամբ կատարում է խախտում, որը պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ, ինչպես նաև
- մեկ տարվա ընթացքում երկու անգամ կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանը կրկին ենթարկվում է կարգապահական պատասխանատվության: Ընդ որում, նշված կանոնից որպես բացառությամբ սահմանված են միայն անդամավճար չվճարելու հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքերը:

Տվյալ դեպքում, Փաստաբանը սույն որոշման կայացման պահի դրությամբ ունի չմարված երեք[1] կարգապահական տույժ, որոնք բոլորը կիրառվել են միևնույն տարվա ընթացքում և սույն որոշման կայացման պահի դրությամբ մարված չեն, ինչը բավարար է <Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում> տույժի տեսակը կիրառելու համար՝ հաշվի առնելով, որ Փաստաբանը երկու անգամ ստացել է խիստ նկատողություն և մեկ անգամ ենթարկվել տուգանքի, որոնցից և ոչ մեկը փաստացի չի հանգեցրել Փաստաբանի իրավաչափ ու կարգապահ վարքի ապահովմանը և առաջացրել է անհրաժեշտություն՝ ամենախիստ կարգապահական տույժի կիրառման համար՝ առավել ևս նկատի ունենալով, որ չմարված կարգապահական տույժերի հիմք ծառայած խախտումները մեծամասամբ նույնանում են սույն որոշմամբ քննարկված խախտումների հետ՝ վկայելով Փաստաբանի վարքագծում այդպիսի խախտումների կանոնավոր ու հաճախակի առկայության մասին ու թելադրելով դրան հակազդելու անհրաժեշտությունը Պալատի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն դեպքում Փաստաբանի նման վարքագիծը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ, քանզի վնասում է փաստաբանների ու փաստաբանության հեղինակությանը, խախտում է անձանց իրավունքներն ու օրինական շահերը և ***խաթարում փաստաբանների ու փաստաբանության հանդեպ վստահությունը և հարգանքը, որոնք ձեռք են բերվում փաստաբանների կարգապահ ու բարեխիղճ աշխատանքով ու ենթակա են Պալատի պաշտպանությանը:***

Փաստաբանի կարգավիճակին անհարիր է այսպիսի իրավիճակը, երբ վստահորդը գործը ստանձնելով հանդերձ՝ Փաստաբանը տարիների ընթացքում չի ձեռնարկում վստահորդի հանձնարարության կատարմանն ուղղված գործուն միջոցներ, չի ցուցաբերում պատասխանատու, վստահելի, պարտաճանաչ ու կարգապահ վարքագիծ՝ միաժամանակ չապահովելով նաև կայուն, որակյալ ու բովանդակալի հաղորդակցություն վստահորդի հետ և այդպիսով մեկ դրվագում թույլ տալով նույնիսկ ոչ թե մեկ, այլ՝ երեք առանձին, ինքնուրույն խախտումներ, ինչը ևս ազդում է տույժի տեսակի ընտրության վրա:

Նմանատիպ վարքագիծն ինչպես առանձին, այնպես էլ Փաստաբանի չմարված կարգապահական տույժերով արձանագրված խախտումների համակցությամբ վկայում է սույն որոշմամբ նշված խախտումը գիտակցված և դիտավորությամբ կատարվելու մասին՝ այդպիսով ևս անհրաժեշտ դարձնելով խստագույն կարգապահական միջամտությունը Պալատի կողմից:

Վերոհիշյալը բավարար համարելով հանդերձ՝ Հանձնաժողովը, ամեն դեպքում, լրացուցիչ հարկ է համարում անդրադառնալ նաև Պատասխանողի պատասխանատվությունն անհատականացնող այլ հանգամանքներին:

Իրավաչափ նպատակ և համաչափություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000):

[1] Թեև օրենքով բավարար են անգամ երկուսը:

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժին ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով և 5-րդ մասի 1-ին ու 2-րդ կետերով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշների կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով Պալատին իրավունք է տրվում փաստաբանի գործունեության արտոնագրի գործողությունը դադարեցնել, եթե նրա կողմից կատարվել է դիտավորյալ կարգապահական խախտում, որը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ Փաստաբանն իր մեղքի բացակայության մասին պնդում չի կատարել ու չի ապացուցել, իսկ վարույթի նյութերում առկա չէ Փաստաբանի մեղքի բացակայության մասին որևէ ապացույց, ուստի Հանձնաժողովը թույլ տրված խախտումներում Փաստաբանի մեղքը համարում է առկա, ընդ որում՝ դիտավորության ձևով՝ վերոնշյալ պատճառաբանություններով ու հիմնավորումներով:

Կարգապահական խախտման հետևանքները

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:*

Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Օրենքի 3-րդ հոդվածը նույնպես երաշխավորվում է փաստաբանության անկախությունը:

Ըստ այդ հոդվածի՝ «*Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:»:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.1 կետի համաձայն՝ *իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է*

բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար: Այս անկախությունը անհրաժեշտ է նաև ոչ վիճելի դեպքերում, և դատավարությունների ժամանակ:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Պալատը գտնում է, որ Օրենքով և Կանոնագրքով նախատեսված սահմանափակումները կոչված են երաշխավորելու անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման համար ամրագրված կառուցակարգերն ու ընթացակարգերը, որոնց հաշվառմամբ միայն փաստաբանը կարող է իրականացնել անձի իրավունքների ու շահերի արդյունավետ պաշտպանություն՝ տիրապետելով նաև փաստաբանական գաղտնիքի և մատուցելով բարեխիղճ իրավական օգնություն:

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ Դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը.* ***«Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»:*** *Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները սահմանադրական*

մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը»:

Հանձնաժողովն արձանագրում է, որ անձը զրկված կլինի իրացնելու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իր հիմնական իրավունքը, ինչպես նաև չի ունենա պատշաճ վերաբերմունք փաստաբանական ինստիտուտի ու փաստաբանների նկատմամբ, եթե Փաստաբանը չկատարի իր հիմնական իրավապաշտպան առաքելությունը:

Տվյալ դեպքում կարգապահական գործի նյութերով հաստատվել է, որ Փաստաբանը, ստանձնելով Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը, թողել է վերջինիս առանց անհրաժեշտ պաշտպանության, ինչի արդյունքում Դիմողը փաստացի զրկվել է իրավաբանական օգնությունից և անտեղյակ մնացել իր հանձնարարության ընթացքից:

Փաստաբանի անձը, առկա տույժերը

Պատասխանողն առաջին անգամ չէ, որ թույլ է տալիս համանման կարգապահական խախտումներ և ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Մասնավորապես, հաշվի առնելով չմարված տույժերը, Փաստաբանը՝

1) Պալատի Հանձնաժողովի 28.03.2023թ. թիվ ԿԳ/22020 որոշմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ կիրառվել են «Խիստ նկատողություն»՝ որպես հիմնական և «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ա/ժ՝ որպես լրացուցիչ տույժերը:
2) Պալատի Հանձնաժողովի 25.05.2023թ. թիվ ԿԳ-23007-2 Ա որոշմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.4 ենթակետերի խախտման համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ կիրառվել են «Խիստ նկատողություն»՝ որպես հիմնական և «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ա/ժ՝ որպես լրացուցիչ տույժերը:
3) Պալատի Հանձնաժողովի 25.05.2023թ. թիվ ԿԳ-23007-2 Ա որոշմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ կիրառվել է «Տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով»՝ որպես հիմնական տույժը:

Ամփոփելով վերոգրյալը, Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանողի վարքագծի օբյեկտիվ կողմի հանգամանքները վկայող փաստերը բավարար են՝ հավաստելու համար, որ վերջինիս կողմից կատարված կարգապահական խախտումը դրա կատարման հանգամանքներով ու Դիմողի, ինչպես նաև փաստաբանական ինստիտուտի համար առաջացրած հետևանքներով պայմանավորված՝ գիտակցական ու դիտավորյալ վարքի արդյունք է ու համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Ավելին, Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ նույնանման և/կամ համանման խախտումների համար միևնույն տարվա ընթացքում ենթարկվել է չմարված երեք այլ կարգապահական տույժերի, ընդ որում՝ Փաստաբանի նկատմամբ նույնանման և/կամ համանման խախտումների համար կիրառվել է երկու անգամ՝ խիստ նկատողություն, մեկ

անգամ՝ տուգանք, սակայն նույնիսկ այդ խիստ կարգապահական տույժերը չեն ապահովել Փաստաբանի հետագա պատշաճ վարքագիծը, ինչը ևս բնութագրում է Փաստաբանի անձն ու ընդգծում խստագույն կարգապահական տույժի կիրառման օբյեկտիվ անխուսափելիությունը:

Հանձնաժողովը, հատուկ ընդգծում է, որ <u>միայն սույն կարգապահական գործով</u> առկա փաստերն արդեն իսկ բավարար են հաստատված համարելու այն հանգամանքը, որ Փաստաբանի նման վարքագիծը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Պատասխանողի մեղքի բնույթն, աստիճանը, անձը բնութագրող հանգամանքները, ինչպես նաև նախկինում նույն և/կամ համանման խախտումների համար պատասխանատվության ենթարկված լինելու փաստերը, հիմք են նրա նկատմամբ կիրառելու ամենախիստ՝ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժը:

Շարադրված հանգամանքները վկայում են նաև այն մասին, որ առկա է համաչափություն Պալատի Հանձնաժողովի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակի և այդ ուղղությամբ ընտրված միջոցի միջև, իսկ ցանկացած այլ՝ ավելի մեղմ միջոց սույն իրավիճակում չի կարող համարվել ու հանդիսանալ արդյունավետ և համարժեք միջամտություն (հակազդեցություն):

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 2-րդ մասի և 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանի (արտոնագիր՝ թիվ 944) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում»՝ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի՝ սույն որոշմամբ նկարագրված խախտումների համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-26154-2-Ա
08 հուլիսի 2026թ.
ք.Երևան